ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

<<ԳՅՈՒՄՐՈՒ
<<ԵՐԵԽԱՆԵՐԻ ՏՈՒՆ>> ՊՈԱԿ

3103 ք. Գյումրի, Թամանյան 17
☎ (+312) 3 13 28, 3 28 23
Էլ. փոստ: mss.home@mail.ru

REPUBLIC OF ARMENIA
THE MINISTRY OF
WORK AND SOCIAL QUESTIONS

"GYUMRI
"CHILDREN'S HOME" SNCO

Tamanian 17, Gyumri, 3103
☎ (+312) 3 13 28, 3 28 23
E-mail: mss.home@mail.ru

<<27>> մայիս 2021թ.
N Մ/Պ-21/32

<<Ազուռ>> ՍՊԸ տնօրեն
Արման Երիջանյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ
(պայմանագիրը ամբողջությամբ լուծելու մասին)

Տեղեկացնում ենք Ձեզ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և <<Ազուռ>> ՍՊԸ-ն /այսուհետ Ընկերություն/ միջև **<<ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ԳԵՏ-ԱՋ** >> ծածկագրով 29.12.2020թ-ին կնքված (17.02.2021 թվականին կնքված Համաձայնագիր N1) <<Գյումրու <<Երեխաների տուն>> ՊՈԱԿ -ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագիրը /այսուհետ մատակարարման պայմանագիր/ համարվում է ամբողջությամբ լուծված՝ հիմք ընդունելով 26.05.2021թվականի <<Ազուռ>> ՍՊԸ –ի կողմից ներկայացրած գրությունը առ այն, որ ընկերությունը դադարեցնում է հետագա սննդամթերքի մատակարարումը, N ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-ԳԵՏ-ԱՋ ծածկագրով 29.12.2020թ կնքված Սննդամթերքի Մատակարարման պայմանագրի 6.6 կետը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասը:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 4.2 և հավելված 5.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարները գանձելու նպատակով:

Ընկերությանը, <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, Ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին:

«Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի տնօրենի
պարտականությունները ժամանակավոր կատարող ***Պ. Վալեսյան***